ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ե 40/11-6332
«16» 11 2018թ.

ՀՀ, ք Երևան 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝(+374 10) 44-34-80
Հեռ.՝(+374 10) 44-29-04
Հեռ.՝(+374 60) 37-77-37
Հեռ.՝(+374 60) 37-26-56

«ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ՝
Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Դանիելյան,

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության և «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի միջև 21.05.2018թ. կնքված «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/31-1» ծածկագրով պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) N1 հավելվածով՝ «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ով, մրգերի և բանջարեղենների (բացի ճակնդեղից) մատակարարման ժամկետը սահմանված էր 2018թ. 3-րդ եռամսյակի ընթացքում, որը երկարաձգվել էր մինչև 31.10.2018թ.-ը, սակայն մինչ օրս նշված ապրանքները թերի են մատակարարվել (բացի ճակնդեղից և սալորից), իսկ դեղձ ընդհանրապես չի մատակարարվել: Վերը նշված պայմանագրի շրջանակներում թերի մատակարարված մրգերի և բանաջարեղենների քանակները հետևյալն են՝

| Հ/հ | Անվանում | Չ/մ | Միավորի գինը (ՀՀ դրամ) | Պայմանագրով նախատեսված քանակ | Մատակարարված քանակ | Չմատակարարված քանակ | Չմատակարարված ապրանքների գումար (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | դեղձ | կգ | 159 | 4000 | - | 4000 | 636000,00 |
| 2 | բիբար | կգ | 139,98 | 10000 | 5670 | 4330 | 606113,40 |
| 3 | պոմիդոր | կգ | 118,98 | 16000 | 3644 | 12356 | 1470116,88 |
| 4 | վարունգ | կգ | 96 | 10000 | 7769 | 2231 | 214176,00 |
| 5 | սմբուկ | կգ | 94,98 | 20000 | 12613 | 7387 | 701617,26 |
| | Ընդամենը | | | | | | 3628023,54 |

Հաշվի առնելով վերը նշվածը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը և 2.1.7.1 կետի բ) ենթակետը՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը 2018թ. նոյեմբերի 16-ից՝ միակողմանի մասնակի լուծում է վերը նշված պայմանագիրը՝ 4000 կգ «դեղձի», 4330 կգ «բիբարի», 12356 կգ «պոմիդորի», 2231 կգ «վարունգի» և 7387 կգ «սմբուկի» մասերով, որի ընդհանուր գումարը կազմում է 3628023,54 (երեք միլիոն վեց հարյուր քսանութ հազար քսաներեք ամբողջ 54 հարյուրերորդական) ՀՀ դրամ:

Նշված գումարի չափով Պայմանագրի միակողմանի մասնակի լուծումից հետո՝ «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/31-1» ծածկագրով պայմանագրի ընդհանուր գումարը կազմում է 6500246,46 (վեց միլիոն հինգ հարյուր հազար երկու հարյուր քառասունվեց ամբողջ 46 հարյուրերորդական) ՀՀ դրամ:

Տեղեկացնում ենք, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի վճարման գումարներից ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին կփոխանցի 29024 (քսանինը հազար քսանչորս) ՀՀ դրամը որպես տույժ՝ Պայմանագրի 6.2 կետի համաձայն, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին կփոխանցի 679908 (վեց հարյուր յոթանասունինը հազար ինը հարյուր ութ) ՀՀ դրամը որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովման գումար (10%), հիմք՝ ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն-որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 18-րդ ենթակետի դ) կետ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ՝ ԱՐՏՅՈՄ ՄԽՈՅԱՆ

Կատարող՝
Ա.Առաքելյան,
ՀՀ ԱՆ ՔԿԾ ՆՏԱ բաժին
Հեռ.՝ 060 -37-05-30